

համար: Կը սիրէր անոր պարզութիւնը, սկեպտիկ ժպիտը, խորհրդաւոր քմծիծաղը: Վիթթօն Հիւկօն զինքը կը հրապուրէր իր համամարդկային սրտին, բարութեանը, դուրսի համար: Միշտ իր սեղանին վրայ ունէր անոր քերթըւածներու հաւաքածուն, որմէ յաճախ կը կարդար, մէկ կարդացածը բազմիցս անգամ: Բայց Ռընանն էր իր նախընտրածը. մոլին էր անոր ամենէն չոր ուսումնասիրութիւններուն անգամ, զորս կը կարդար գիտնականի մը պէս, մխրճուելով անոնց խորը, ու բազմատելով յաճախ զանոնք իրենց աղբիւրներուն հետ: Երբ Պուրէշը պիտի թողուր, ինծի ժառանգ ձգեց իր գրքերուն մեծ մասը, — Հիւկօններն ու Անաթոլ Ֆրանսները: Բայց Ռընանի երկերը միասին տարաւ, իրբեւ ճամբու ու մտքի անբաժան ընկեր: Եւ Սիւրիայէն դրած առաջին նամակին մէջ կ'ողբար անոնց կորուստը ճամբան, արկածի մը ատեն:

— Հայ հեղինակներէն, — ըսաւ, — ամենէն աւելի կը սիրեմ նախ երեք բանաստեղծներ, Հայր Աւետիք Ալիշանը, Պետրոս Դուրեանը եւ Սիւրիլը: Զգացումն ու անոր արտայայտութեան ձեւն է, որ աւելի կը հրապուրէ զիս, քան խորքը: Ես չեմ փնտրեր արդէն խորքը բանաստեղծութեան մէջ: Ամենէն աւելի սիրած արձակագիրս է Աւետիք Բաշալեանը: Կը սիրեմ նաեւ Նիկիա Տէմիրճիպաշեանը իր լեզուին ու ոճին համար, խորշելով հանդերձ իր անհասարակ ըլլալով մարդու ներշնչումներէն: Ես չեմ ընդունիր արդէն խնթութիւնը իրբեւ արուեստի մասնիկ:

ԻՐ ԾՊՏՈՒՄՆԵՐԸ

— Ծատ չեմ սիրած, — ըսաւ Օտեան, — կեղծանուններ գործածել: Գրածներուս ըստուար մեծամասնութիւնը բուն անունովս են: Երբեք չեմ վախցած գրածներուս պատասխանատուութիւնը ստանձնելէ: Մտորագրած եմ թէ՛ յաջողած էջերս, եւ թէ՛ ամենէն տկարները, միեւնոյն պատրաստակամութեամբ: Ծածկանուններ ես ալ գործածած եմ սակայն: Ամենէն առջի գրական անունս եղած է Գ. Ս. Ժիրայր, որով ստորագրած եմ Պոլսոյ «Հայրենիք»ի մէջ: «Հայրենիք»ի շրջանէն է դարձեալ Երօտ ստորագրութիւնս, այսինքն՝ անունս եւ մականունս խտացած: «Նոր Կեանք»ի մէջ ալ ստորագրած եմ Վահրամ Վահրամ-

եան: (Վահրամը՝ հօրեղբայրս Գրիգոր Օտեանն էր): Սահմանադրութենէն յետոյ, մասնաւորաբար «Ժամանակ»ի եւ «Վերջին Լուր»ի մէջ, ստորագրած եմ Իզիպոս, առհասարակ քաղաքական եւ աղաղային ու կուսակցական յօդուածներու տակ: Ուրիշ ծածկանուն գրեթէ չեմ գործածած:

Օտեան, արդարեւ, չէր վախնար նոյնիսկ ամենէն պատասխանատու նիւթերը իր ստորագրութեամբը տալ: Քիչ պատահած չէ, որ իր այս կամ այն դրածը վէճի դուռ բանայ, յաճախ մինչեւ դատարան տանի զինքը: Նման միջադէպեր ունեցաւ Օննիկ Իսսանի, Վահան Զէյթունցեանի, Տոքթ. Էմիրդէի, Հմայեակ Արամեանցի եւ ուրիշներու հետ:

ԱԿՆԱՐԿ ՄԸ ԻՐ ԵՐԿԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Բաւական օրեր պէտք եղան, որպէսզի միասին կազմենք իր երկերուն ցանկը: Մարդուս գլխու պտոյտ կուտայ նոյնիսկ ակնարկ մը նետելը այդ ցանկին վրայ: Քառասուն տարի դրած է Օտեան անընդհատ, եւ ամէն տեսակ նիւթի վրայ, — քրոնիկ, քաղաքական յօդուած, վէպ, վիպակ, թատերախաղ, յիշատակներ, ուսումնասիրութիւններ, թարգմանութիւններ: Ու այս բոլորը դէզե՛ր դէզե՛ր կը կազմեն, հրակայ, լեռնակուտակ:

Անգամ մը Օչական «հարթեր» էր Մարտո Բիւրատը «Մեհեան»ի մէջ շատ, չա՛տ անխառնայ: Բիւրատ օր մը զիս տեսնելուն իր կըսկիծը պոռթկաց Օչականին ակնարկելով. «Սըմպլը՛լ, գրածներուս դէզին տակը կը ճըզմըլիս»:

Մէկ չէ, քանի մը հոգի կը ճգմուին Օտեանին գրածներուն դէզին տակ: Անգաղար գրեց անիկա գէշն ու աղէկը, լուրջն ու զուարթը, խնամուածն ալ, անխամն ալ, որովհետեւ գրելով ստիպուած էր ազրիլ:

ԻՐ ՎԷՊԵՐԸ

Իր գրականութեան մէջ ամենէն պատկառելի մասը վէպերն են, մեծ մասամբ գրուած Օսմ. Սահմանադրութենէն յետոյ, հեւիհեւ, օրաթերթերու մէջ թերթօն ըլլալու համար: Աստոնցմէ շատը վերջէն հատորով ալ լոյս տեսած են: Ահա անոնց մէկ ցանկը —

1. Սալիհա Հանըմ, երեք հատոր (1912) հատոր, (1911)
2. Սալիհա Հանըմ, երեք հատոր (1912)